ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՆԻՖ-2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» մայիսի 2025թ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ Նվիրատու)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Մարո Մարգարյանի, որը գործում է Նվիրատուի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Նվիրառու)՝ ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Մկրտումյանի, որը գործում է Նվիրառուի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ, լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 646-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Նվիրատուն բաժին 01, խումբ 03, դաս 03, ծրագրի դասիչ 1079, միջոցառման դասիչ 12002 «Ֆինանսական աջակցություն լուծարման գործընթացում գտնվող առևտրային կազմակերպությանը» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) իրականացման նպատակով Նվիրառուին սեփականության իրավունքով անհատույց հատկացնում է Որոշմամբ նախատեսված 84,474,000 (ութսունչորս միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ դրամաշնորհի գումարը՝ 2024 թվականի գործունեության արդյունքում գոյացած շահութահարկի գծով պարտավորությունը մարելու նպատակով:

1.2. Նվիրառուի կողմից իրականացվելիք Միջոցառումը և ծախսերի նախահաշիվը ներկայացված է Պայմանագրի N 1 Հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Նվիրառուից պահանջել Միջոցառումն իրականացնել Պայմանագրի Հավելված 1-ում սահմանված ժամկետներում,

2.1.2. Նվիրառուից պահանջել ներկայացնել Միջոցառման կատարման վերաբերյալ եռամսյակային և ամփոփ-տարեկան հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ նախահաշվին համապատասխան:

2.1.3. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգել Նվիրառուի կողմից իրականացվող Միջոցառման ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.4. Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջել իրեն հանձնել անավարտ Միջոցառման արդյունքները,

2.1.5. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել իրականացված Միջոցառումը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ.

2.2. Նվիրառուն իրավունք ունի՝

2.2.1. Նվիրատուից պահանջել վճարել իրեն Պայմանագրով սահմանված գումարը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում,

2.2.2. Նվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները,

2.3. Նվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Միջոցառմամբ նախատեսված դեպքերում աջակցել Նվիրառուին,

2.3.2. Անհրաժեշտության դեպքում՝ կատարել Միջոցառման իրականացման մոնիթորինգ:

Նվիրառուն պարտավոր է՝

2.3.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Միջոցառմամբ և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.3.4. Կատարել Նվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.3.5. Պայմանագրով սահմանված կարգով Նվիրատուին Միջոցառման ընթացքում և ավարտից հետո ներկայացնել միջոցառումների իրականացման վերաբերյալ եռամսյակային և ամփոփ-տարեկան Հաշվետվություն: Սույն կետում նշված եռամսյակային Հաշվետվությունը Նվիրառուն պարտավոր է ներկայացնել մինչև եռամսյակին հաջորդող ամսի 15-ը, իսկ ամփոփ-տարեկան Հաշվետվությունը Նվիրառուն պարտավոր է ներկայացնել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 26-ը:

2.3.6. Պայմանագրի 2.3.5. կետով սահմանված Հաշվետվության վերաբերյալ դիտարկումներ ստանալու պարագայում Նվիրատուին 10 (տասը) աշխատանքային օրում ներկայացնել վերանայված Հաշվետվության տարբերակը կամ ներկայացված դիտարկումների վերաբերյալ պարզաբանումներ:

2.3.7. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերող փատաթղթերին Նվիրատուի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստուգում իրականացնող իրավասու Պետական մարմնի ծանոթանալու հնարավորությունը: Ստացված փաստաթղթերն արգելվում է պատճենել կամ որևէ կերպ փոխանցել էլեկտրոնային կրիչների վրա և ենթակա են պարտադիր վերադարձման դրանք ստանալու օրվան հաջորդող 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում: Ստացված փաստաթղթերը կարող են տրամադրվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի մոտ ստուգում իրականացնելու իրավասություն ունեցող իրավասու մարմիններին: Սույն կետով սահմանված փաստաթղթերը տրամադրվում են Պետական մարմնին՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում,

2.3.8. Նվիրատուի կողմից Միջոցառման իրականացման մասին Հաշվետվությունը չընդունվելու դեպքում՝ Նվիրառուն պարտավորվում է անվճար և Նվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.3.9. Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.3.10. Միջոցառման իրականացման համար սույն պայմանագրով հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի՝ Միջոցառման տարեկան արդյունքները Նվիրատուի կողմից ընդունվելուց հետո Նվիրառուն Միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026թ.-ի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1 Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուն Նվիրատուին է ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում իր կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակը (հավելված N 2):

3.2. Նվիրատուն հանձնման-ընդունման արձանագրության օրինակները ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում, կնքում և Նվիրառուին է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրության և եզրակացության (հավելված N 3) մեկ օրինակը կամ նրան է ներկայացնում Աշխատանքները կամ դրանց որևէ մասը չընդունելու պատճառաբանված գրավոր մերժում՝ մատնանշելով անհամապատասխանությունները և սահմանելով Աշխատանքների կամ դրանց որևէ մասի վերստին կատարման ողջամիտ ժամկետ:

3.3. Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը համարվում են Նվիրատուի կողմից ընդունված, եթե դրա հանձնման-ընդունման արձանագրությունը Նվիրառուից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուն չի կատարում սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

3.4. Կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի հետ կապված վերջնահաշվարկները Կողմերի միջև կատարվում են յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով՝ համաձայն Հավելված N 1-ի («Նախահաշիվ»):

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրի 1.1 կետում նշված գումարի վճարումը կատարվում է միանվագ՝ սույն պայմանագրի ստորագրման պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Նվիրառուն պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Նվիրառուից գանձվում է տուգանք Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում է Միջոցառման իրականացման արդյունքում Նվիրառուին վճարման ենթակա գումարների հետ, իսկ եթե հաշվանցման համար անհրաժեշտ մնացորդն առկա չէ, ապա այն հետ է վճարվում Նվիրառուի կողմից:

5.4. Նվիրատուի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Նվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5. Պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրի N 1 հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.5. Նվիրառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Նվիրատուն հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Նվիրառուն Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Նվիրատուն այն ուղարկում է նաև Նվիրառուի էլեկտրոնային փոստին:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նվիրատու	Նվիրառու
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ
Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4	Հասցե՝ 0010, ք. Երևան, Նալբանդյան 28
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011053635	Հ/Հ 1570063219860100
ՀՎՀՀ 02528489	ՀՎՀՀ 02697868
Գլխավոր քարտուղար՝	**Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝**
ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ	ԴԱՎԻԹ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №.1
« 30 » մայիսի 2025թ.
Կնքված N ԱՆԻՖ-2 պայմանագրի

ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ
ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ստորագրություն

« » « » 2025թ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ N1

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության

1. Կազմակերպության անվանումը՝ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ — Պետական գույքի կառավարման կոմիտե

2. ՀՎՀՀ 02697868 — բաժին 01 խումբ 03 դաս 03

3. Փոստային հասցեն Երևան, Նալբանդյան 28, 0010 — հազար դրամ

4. Կազմակերպության տեղաբաշխման մարզի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման

Տողերի NN	Ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)		Առաջին եռամսյակ			Առաջին կիսամյակ			Ինն ամիս			Տարեկան		
	Անվանումները	Տնտեսագիտական ծածկագիրը	Նախահաշիվ	Նախահաշվում կատարված փոփոխությունները (ավելացումները դրական նշանով, պակասեցումները փակագծերում)	Հաստատված (հաշվառված) ծախսում	Նախահաշիվ	Նախահաշվում կատարված փոփոխությունները (ավելացումները դրական նշանով, պակասեցումները փակագծերում)	Հաստատված (հաշվառված) նախահաշիվ	Նախահաշիվ	Նախահաշվում կատարված փոփոխությունները (ավելացումները դրական նշանով, պակասեցումները փակագծերում)	Հաստատված (հաշվառված) ծախսում	Նախահաշիվ	Նախահաշվում կատարված փոփոխությունները (ավելացումները դրական նշանով, պակասեցումները փակագծերում)	Հաստատված (հաշվառված) նախահաշիվ
Ա	Բ	Գ	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
2000000	I. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 2112000+տող 2113000) այդ թվում՝	X	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0
2112000	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ որից՝	X	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0
2112300	*2.3. Ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից*	*x*	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0

2112310	2.3.1. ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, այդ թվում՝	733100	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0
2112311	2.3.1.1. պետական բյուջեից, այդ թվում՝	x	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0
2112312	2.3.1.1.1. պետության կողմից պատվիրակված ծախսերի փոխհատուցում	x	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0
1000000	II. ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+ տող 4000000) այդ թվում՝	X	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0
1170000	7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	x	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0
1172000	*7.2. Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ*	*x*	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0	0.0	84,474.0
1172200	- Այլ հարկեր	482200	0.0	0.0	0.0	84,474.0	0.0	84,474.0	84,474.0		84,474.0	84,474.0	0.0	84,474.0

«30» «Մայիսի» 2025թ.

Տնօրենի ժ/պ _____
(ստորագրություն)

Ավագ հաշվապահ _____
(ստորագրություն)

Հավելված N 2

Ֆինանսական աջակցության գումարների
օգտագործման դրամաշնորհի 2024թ.-ի
հուլիսի ____ -ի թիվ_____ պայմանագրի

Նվիրառու՝
«Հայաստանի պետական
հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ,
ՀՎՀՀ 02697868, Հասցե՝ 0010, ք. Երևան,
Նալբանդյան 28 «Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570063219860100

Նվիրատու՝
Պետական գույքի կառավարման կոմիտե,
ՀՎՀՀ՝ 02528489,
հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011053635

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N

«___» _____ 2025թ.

Պայմանագրի անվանումը՝ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» դրամաշնորհի պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ _____.__ .2025թ.

Պայմանագրի համարը՝ _____

Նվիրատուն, ի դեմս Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղար Մարո Մարգարյանի, և Նվիրառուն, ի դեմս «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Մկրտումյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ աշխատանքներն ընդունող պատասխանատու ստորաբաժանման կողմից ___.___.ի. 2025թ. կազմված N ___ եզրակացությունն այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են պայմանագրով սահմանված նկարագրին և աշխատանքների իրականացման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունն հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Նվիրառուն ___.___.ի. 2025 թ.-ից մինչև ___.___.2025 թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ աշխատանքները.

Միջոցառման համար կատարված ծախսի նկարագիրը	Միջոցառման համար կատարված ծախսի քանակական ցուցանիշները	Միջոցառման համար կատարված ծախսի ժամկետները
Ընդամենը	.....	.....

Նվիրատու՝ **Նվիրառու՝**

_____ **Մ. Մարգարյան** _____ **Դ. Մկրտումյան**

Կ. Տ. **Կ. Տ.**

Հավելված 3

ՊԳԿԿ նախագահի

----- ----------2025թ.
N ------Ա հրամանի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«_____»«_____» 20 ___ թ.
Պայմանագրի անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____»«_____» 20 ___ թ.
Պայմանագրի համարը _____
Պատվիրատուի անվանումը _____
Պայմանագրի կողմի անվանումը _____

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի իրականացրել է հետևյալ աշխատանքները (մատակարարումներ, ծառայություններ)՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների					
	անվանումը	Աշխատանքների համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը	
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի

_____

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝
_____
_____
_____
_____

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:
(դրական/բացասական)

Պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչ՝

«_____»«_____» 20___ թ. _____
անուն-ազգանուն, ստորագրություն